

## Ծանուցում հիվանդներին և ծնողներին պատվաստումների ռեեստրից

Պատվաստումները կամ «ներարկումները» կանխում են լուրջ հիվանդություններ: Տուբերկուլյոզի հայտնաբերման թեստերը (TB) օգնում են որոշել, թե արդյոք վարակված եք այդ հիվանդությամբ: Բացի այդ, դրանք կարող են պահանջվել ուսման կամ աշխատանքի վայր ներկայացնելու համար: Ձեր ստացած պատվաստումների/տուբերկուլյոզի թեստերի մասին տեղեկությունների գրանցումը կարող է դժվար իրագործելի լինել: Այն հատկապես դժվարանում է տարբեր բժիշկներից պատվաստումներ ստանալու դեպքում: Այսօր բժիշկներն օգտվում են պաշտպանված համակարգչային համակարգից, որը կոչվում է ստացած պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի վերաբերյալ Պատվաստումների ռեեստր: Եթե դուք փոխեք ձեր բժշկին, ապա նոր բժիշկը կարող է օգտվել ստացած պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի ռեեստրը դիտելու հնարավորությունից: Կալիֆորնիայի պատվաստումների ռեեստրում (CAIR) դուք կարող եք սահմանափակել ձեր անձնական տվյալների հասանելիությունը:

### Ինչպե՞ս կարող է ռեեստրն օգնել ձեզ

- Այստեղ կպահպանվեն ձեր ստացած պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի վերաբերյալ գրանցումները (մաշկի/կրծքավանդակի ռենտգեն հետազոտության թեստերը), այնպես որ դուք բաց չեք թողնի դրանցից որևէ մեկը կամ չափից շատ չեք ստանա դրանք
- Ձեզ կուղարկվեն ծանուցումներ ձեր կամ ձեր երեխայի պատվաստում/թեստ անցնելու վերաբերյալ
- Դուք կստանաք պատվաստում/թեստ անցնելու վերաբերյալ բժշկական տեղեկանքի պատճենը
- Դուք կկարողանաք ապացույց ներկայացնել պատվաստումների/ տուբերկուլյոզի թեստերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են երեխայի խնամքի, դպրոցի կամ նոր աշխատանքի անցնելու ժամանակ:

### Ինչպե՞ս է ռեեստրն օգնելու ձեր առողջապահական խնամքն իրականացնող անձնակազմին

Բժիշկները, բուժքույրերը, առողջապահական խնամքի ծրագրերը և պետական առողջապահական հաստատություններն օգտվելու են ռեեստրից ստորև դեպքերում.

- Տեսնելու են, թե ինչ պատվաստումներ/տուբերկուլյոզի թեստեր են անհրաժեշտ
- Կհիշեցնեն ձեզ անհրաժեշտ պատվաստումներ անցնելու վերաբերյալ
- Կկանխարգելեն հիվանդությունները ձեր համայնքում
- Կօգնեն վարել հաշվառումը

### Կարո՞ղ են արդյոք դպրոցները կամ այլ հաստատություններ տեսնել ռեեստրը

Այո, սակայն սահմանափակ ձևաչափով: Կալիֆորնիայի օրենքով դպրոցներին, մանկապարտեզներին և այլ հաստատություններին թույլատրվում է

- Տեսնել, թե ինչ ներարկումներ/տուբերկուլյոզի թեստեր են անհրաժեշտ երեխաներին
- Հավաստիանալ, որ երեխաները համապատասխանում են պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի պահանջներին, որոնք անհրաժեշտ են երեխայի խնամքի կամ դպրոց հաճախելու համար

### Ո՞ր տեղեկությունները կարող են բացահայտված լինել ռեեստրում

- հիվանդի անունը, սեռը և ծննդյան ամսաթիվը
- որոշ տեղեկություններ հիվանդի նույնականացման վերաբերյալ

- ծնողների կամ խնամակալների անունները
- մանրամասն տեղեկություններ հիվանդի ստացած պատվաստումների/տուբերկուլյոզի թեստերի կամ բուժական բացառությունների վերաբերյալ

Ռեեստրի գրանցամատյանում մուտքագրված ցանկացած տեղեկություն դիտվում է որպես այլ մասնավոր բժշկական տեղեկատվություն: Ռեեստրից օգտվելու չարաշահումը կարող է պատժվել օրենքով: Կալիֆորնիա նահանգի օրենսդրության համաձայն, ձեր հասցեն և հեռախոսահամարը իրավասու են տեսնել միայն ձեր բժշկի գրասենյակը, առողջապահական ծրագիրը կամ պետական առողջապահական բաժանմունքը: Առողջապահության ոլորտի պաշտոնյաները նույնպես կարող են օգտվել ռեեստրից՝ ելնելով հանրային առողջության պաշտպանության շահերից:

### **Հիվանդի և ծնողների իրավունքները**

Օրենքով ձեզ իրավունք է վերապահված պահանջել ձեր մատակարարից

- արգելել այլ ծառայություն մատուցողների և դպրոցների մուտքը Ձեր (կամ ձեր երեխայի) ռեեստրի գրառումներին
- պատվաստումների վերաբերյալ ծանուցումներ չուղարկել ձեզ
- ձեր կամ ձեր երեխայի ստացած պատվաստումների/տուբերկուլյոզի թեստեր անցնելու վերաբերյալ բժշկական տեղեկանքի պատճենը
- տեղեկացնել, թե ով է ծանոթացել ձեր մասին գրառումներին և սխալի առկայության դեպքում՝ ուղղում մտցնել դրանց մեջ

**CAIR-ի մաս դառնալու համար որևէ գործողություն պետք չէ ձեռնարկել: CAIR այլ ծառայություն մատակարարները, դպրոցները և բուժաշխատողները կարող են ավտոմատ մուտք գործել ձեր կամ ձեր երեխայի գրառումներին:**

### **Եթե ցանկանում եք սահմանափակել նրանց թիվը, ովքեր կարող են տեսնել ձեր կամ ձեր երեխայի վերաբերյալ գրառումները, ապա**

1. Դիմեք ձեր ծառայություն մատակարարին՝ պարզելու համար, թե արդյոք նրանք կարող են արգելափակել CAIR-ում ձեր վերաբերյալ գրառումները
2. Եթե ձեր ծառայություն մատուցողը չի կարող դա անել, ապա լրացրեք Իմ CAIR գրառումների արգելափակման ձևը՝ [CAIRweb.org/cair-forms](http://CAIRweb.org/cair-forms) կայքէջից:
3. Եթե մտափոխվել եք, ապա լրացրեք Իմ CAIR գրառումների արգելափակումից հանելու ձևը:
4. Ուղարկեք դրանց տպագիր ձևերը 1-888-436-8320 ֆաքսի համարին կամ էլեկտրոնային փոստի [CAIRHelpDesk@cdph.ca.gov](mailto:CAIRHelpDesk@cdph.ca.gov) հասցեին Թ

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք CAIR-ի աջակցության ծառայությանը՝ 800-578-7889 հեռախոսահամարով կամ գրեք [CAIRHelpDesk@cdph.ca.gov](mailto:CAIRHelpDesk@cdph.ca.gov) էլեկտրոնային հասցեին:**